ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում՝ ռադիոմեխանիկ ռադիոհեռուստատեսային սարքավորումների նորոգման և սպասարկման» մասնագիտության հիմնական կրթության հիմքով ավարտական կուրսի 2023 թվականի պետական որակավորող հանձնաժողովի

2023 թվականի հունիսի 16-ին անցկացվեց «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում՝ ռադիոմեխանիկ ռադիոհեռուստատեսային սարքավորումների նորոգման և սպասարկման» մասնագիտության գծով պետական ամփոփիչ ստուգում:

Պետական ամփոփիչ ստուգումը կազմակերպվեց և անցկացվեց հանձնաժողովի հետևյալ կազմով՝

նախագահ՝	Խաչիկ Սահակյան	- «Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամի տնօրեն, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղի դասախոս
տեղակալ՝	Քնարիկ Ահարոնյան	- Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի տնօրեն
քարտուղար՝	Աննա Ղանդիլյան	- Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի դասախոս, մասնագիտական մեթոդմիավորման նախագահ
անդամներ՝	Զարուհի Նահապետյան	- Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ
	Անուշ Մկրտչյան	- Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ
	Ալեքսան Նազարյան	- Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում» մասնագիտության վարպետ

Հաստատությունում պետական ամփոփիչ ստուգումն անցկացվեց մասնագիտական մոդուլներից պետական քննության ձևով: Քննությանը մասնակցեց թվով 11 շրջանավարտ:
Ուսումնական հաստատությունում «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում» մասնագիտությամբ դասավանդող մասնագետներն ունեն մասնագիտական հարուստ գիտելիքներ և դասավանդման փորձ, պարբերաբար մասնակցել են ՄԿՈՒՀԱԿ-ի կողմից կազմակերպված «Կարողությունների ձևավորմանը միտված մոդուլային ուսումնական ծրագրերով ուսումնառության գործընթացի կազմակերպման և իրականացման» թեմաներով վերապատրաստման և առցանց տարբեր դասընթացների: Ծանոթ են ռադիոէլեկտրոնային բնագավառի զարգացմանը, ոլորտում նոր տեխնոլոգիաների կիրառմանը, աշխատաշուկայի պահանջներին: Մասնակցել են պետական կրթական չափորոշչի մշակման աշխատանքների, իսկ Ալեքսան Նազարյանը հեղինակել է «Ռադիոհեռուստատեսային սարքավորումների վերանորոգման և սպասարկման հմտություններ» ուսումնական ձեռնարկը և համահեղինակ է

«Էլեկտրոնային կառավարմամբ կենցաղային սարքերի նորոգում և սպասարկում» վերնագրով ձեռնարկի:

Պետական քննության հարցատոմսերում ներառված էին մասնագիտական մոդուլների հիմնական բովանդակությանը համապատասխանող հարցեր, որոնք բխում են մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված որակավորման բնութագրից:
Քննությունն անցկացվեց ուսումնարանի վերանորոգված և տեխնիկապես վերազինված արհեստանոցում, որտեղ ապահովված են բոլոր նպաստավոր պայմանները ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման և սովորողների մասնագիտական գիտելիքների և գործնական հմտությունների հարստացման համար:

Պետական ամփոփիչ ստուգման ընթացքում ցուցադրված էին ուսանողների երեք տարիների ընթացքում անհատական պատրաստած ռադիոէլեկտրոնային սարքավորումներ, որոնք տարբեր էին և ամփոփում էին ուսումնառության ընթացքում ուսանողների մասնագիտական տարբեր մոդուլներից ստացած գիտելիքները, կարողություններն ու հետազոտական ստեղծագործ միտքը: Քննության ընթացքում ուսանողները ներկայացրին մասնագիտական լավ տեսական գիտելիքներ, ըստ գծագրերի մանրամասնորեն բացատրեցին անհատական աշխատանքների կատարման քայլերի հաջորդականությունը, օգտագործած գործիքներն ու սարքավորումները, դրանց կառուցվածքի առանձնահատկություններն ու աշխատանքի սկզբունքները: Նրանք կարողանում էին պատրաստել տարբեր սարքերի տեխնիկական սալիկներ, տպասալիկի վրա առանձնացնել սարքավորումների հանգույցներ, զոդել համապատասխան ռադիոդետալներ, ձևավորել և գունավորել մոդելների արտաքին տեսքը: Վարժ կատարում էին սարքերի համալարումներ, չափիչ-ստուգիչ սարքավորումների և գործիքների միջոցով պարամետրերի չափումներ, ախտորոշում՝ սարքավորման անսարքությունները և առաջարկում՝ նորոգման տարբեր եղանակներ: Առանձնահատուկ տեսական գիտելիքներ, մասնագիտական կարողություններ և անհատական աշխատանքներ ներկայացրեցին Հենրիկ Վարդանյանը, Գագիկ Մանուկյանը և Էրիկ Ոսկանյանը:

Պետական որակավորող հանձնաժողովը որոշեց 11 ուսանողի շնորհել «ռադիոմեխանիկ՝ ռադիոհեռուստատեսային սարքավորումների նորոգման և սպասարկման» որակավորում և հանձնել պետական նմուշի ավարտական փաստաթուղթ /դիպլոմ/:

Մասնագետների պատրաստման հետագա կատարելագործման նպատակով ուսումնական հաստատությանը առաջարկվեց ուսումնական գործընթացում շարունակել կիրառել ռադիոէլեկտրոնիկայի բնագավառում կիրառվող տեխնոլոգիաների և ժամանակակից տեխնիկայի վերաբերյալ նորարարությունները, հետևել առցանց տարբեր դասընթացների, որոնք կապահովեն գործատուների և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական գիտելիքներով և գործնական կարողություններով օժտված շրջանավարտների պատրաստմանը:

Հանձնաժողովի նախագահ՝ Խաչիկ Սահակյան

16.06.2023թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի «Ոսկերչություն՝ ոսկերիչ» մասնագիտության հիմնական կրթության հիմքով ավարտական կուրսի 2023 թվականի պետական որակավորող հանձնաժողովի

2023 թվականի հունիսի 15-ին անցկացվեց «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի «Ոսկերչություն՝ ոսկերիչ» մասնագիտության գծով պետական ամփոփիչ ստուգում:

Պետական ամփոփիչ ստուգումը կազմակերպվեց և անցկացվեց հանձնաժողովի հետևյալ կազմով՝

նախագահ՝	Համբարձում Բեգոյան -	Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղի «Կիրառական» և «Դիզայն» բաժինների դասախոս, դոցենտ
տեղակալ՝	Քնարիկ Ահարոնյան -	Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի տնօրեն
քարտուղար՝	Աննա Ղանդիլյան -	Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի դասախոս, մասնագիտական մեթոդմիավորման նախագահ
անդամներ՝	Զարուհի Նահապետյան -	Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ
	Արամ Բաղդասարյան -	Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի վաչպետ, դասախոս
	Արտյոմ Մարտիրոսյան -	Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի վարպետ, դասախոս

Հաստատությունում պետական ամփոփիչ ստուգումն անցկացվեց մասնագիտական մոդուլներից համալիր քննության ձևով: Քննությանը մասնակցեց թվով 16 շրջանավարտ:

Ուսումնական հաստատությունում «Ոսկերչություն» մասնագիտությամբ դասավանդող մասնագետները ունեն մասնագիտական խորը գիտելիքներ և դասավանդման հարուստ փորձ, պարբերաբար մասնակցել են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից կազմակերպված «Կարողությունների ձևավորմանը միտված մոդուլային ուսումնական ծրագրերով ուսումնառության գործընթացի կազմակերպման և իրականացման» թեմաներով վերապատրաստման և առցանց տարբեր դասընթացների, ծանոթ են ոսկերչության բնագավառի զարգացմանը, ոլորտում նոր տեխնոլոգիաների կիրառմանը, աշխատաշուկայի պահանջներին: Արտյոմ Մարտիրոսյանը ոսկերիչների միության անդամ է, բազմիցս մասնակցել է նաև պետական կրթական չափորոշչի մշակման և վերանայման աշխատանքներին:

Պետական քննության հարցատոմսերում ներառված էին մասնագիտական մոդուլների հիմնական բովանդակությանը համապատասխանող հարցեր, որոնք բխում են մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված որակավորման բնութագրից:

Քննությունն անցկացվեց վերանորոգված, աշխատանքային բարենպաստ պայմաններով ապահովված ոսկերչական արհեստանոցում:

Պետական ամփոփիչ ստուգման ընթացքում ցուցադրված էր ուսանողների ուսումնառության երեք տարիների ընթացքում կատարած անհատական աշխատանքները, որոնց մեջ տեղ էին գտել ինքնատիպ, ստեղծագործական համարձակ լուծումներով տարբեր մետաղներով պատրաստված գեղարվեստական իրեր և զարդեր:

Քննության ընթացքում ուսանողները ցուցաբերեցին մասնագիտական տեսական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ: Առանձնահատուկ էին Արթուր Ազրոյանի, Կարլեն Շահբազյանի և Սամվել Ղազարյանի մասնագիտական պատրաստվածությունը, իսկ ներկայացված աշխատանքներն իրենց կատարման արհեստավարժությամբ ու ստեղծագործական յուրովի լուծումներով արժանացան ամենաբարձր գնահատականի: Դիտարժան էր ուսանողների հյուսվածքային տեխնիկայով կատարված աշխատանքները:
Կարլեն Շահբազյանը մասնակցել է «Համաշխարհային հմտություններ-2021» մրցույթի ազգային փուլին, գրավել՝ երրորդ տեղ:

Ուսանողները վարժ տիրապետում էին ոսկերչական տարբեր հաստոցների, գործիքների, սարքավորումների, հարմարանքների շահագործման առանձնահատկություններին և անվտանգության տիպային կանոններին, աշխատանքային գործընթացում օգտագործվող մետաղական համաձուլվածքներին և օժանդակ նյութերին: Ճիշտ էին պատկերացնում ոսկերչական իրի վերանորոգման աշխատանքների հետ կապված նրբությունները: Գրագետ ներկայացրին քարերի տեսակներն ու դրանց տեղադրման եղանակները:

Քննության ընթացքում կատարվեցին աշխատատեղի նախապատրաստման, մետաղի կտրման, խարտման, գլոցման, ձուլման, լարաձգման, հարգի փոփոխման հաշվարկներ և այլ աշխատանքներ:

Պետական որակավորող հանձնաժողովը որոշեց մասնակից 16 ուսանողներին շնորհել ոսկերիչի որակավորում, հանձնել պետական նմուշի ավարտական փաստաթուղթ /դիպլոմ/:

Մասնագետների պատրաստման հետագա կատարելագործման նպատակով ուսումնական հաստատությանը առաջարկվեց հետևել ոսկերչության բնագավառում կիրառվող նորագույն տեխնոլոգիաներին, աշխատաշուկայի պահանջներին, որը կխթանի շրջանավարտների մասնագիտական գործունեության ծավալմանը:

Հանձնաժողովի նախագահ՝ Համբարձում Բեգոյան

15.06.2023թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի «Գեղանկարչություն և քանդակագործություն՝ փորագրող՝ փայտյա գեղարվեստական իրերի» մասնագիտության հիմնական կրթության հիմքով ավարտական կուրսի 2023 թվականի պետական որակավորող հանձնաժողովի

2023 թվականի հունիսի 14-ին անցկացվեց «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի «Գեղանկարչություն և քանդակագործություն՝ փորագրող՝ փայտյա գեղարվեստական իրերի» մասնագիտության գծով պետական ամփոփիչ ստուգում:

Պետական ամփոփիչ ստուգումը կազմակերպվեց և անցկացվեց հանձնաժողովի հետևյալ կազմով՝

նախագահ՝	Վահագն Ղուկասյան –	Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղի տնօրեն, դասախոս, նկարիչ
տեղակալ՝	Քնարիկ Ահարոնյան -	Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի տնօրեն
քարտուղար՝	Աննա Ղանդիլյան -	Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի դասախոս, մասնագիտական մեթոդմիավորման նախագահ
անդամներ՝	Զարուհի Նահապետյան -	Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ
	Սուսաննա Ավետիսյան -	Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի դասախոս, ավագ վարպետ
	Ստեփան Մկրտչյան -	Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի «Գեղանկարչություն և քանդակագործություն՝ փորագրող՝ փայտյա գեղարվեստական իրերի» մասնագիտության վարպետ, դասախոս:

Հաստատությունում պետական ամփոփիչ ստուգումն անցկացվեց մասնագիտական մոդուլներից պետական քննության ձևով: Քննությանը մասնակցեց թվով 8 շրջանավարտ:
Ուսումնական հաստատությունում «Գեղանկարչություն և քանդակագործություն՝ փորագրող՝ փայտյա գեղարվեստական իրերի» մասնագիտությամբ դասավանդող մասնագետը ունի մասնագիտական դասավանդման փորձ, հարուստ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, պարբերաբար մասնակցել է մոդուլային ուսուցման վերապատրաստման դասընթացների, նախնական մասնագիտական կրթության «Զարդակիրառական արվեստ» մասնագիտության ուսումնական ծեռնարկի հեղինակն է, մասնակցել է պետական կրթական չափորոշիչների մշակման և վերանայման աշխատանքներին, ծանոթ է փայտարվեստի զարգացմանն ու նորարարություններին, ոլորտում նոր տեխնոլոգիաների կիրառմանը, գործատուների և աշխատաշուկայի պահանջներին:

Պետական քննության հարցատոմսերում ներառված էին մասնագիտական մոդուլների հիմնական բովանդակությանը համապատասխանող հարցեր, որոնք բխում են մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված որակավորման բնութագրից:

Քննությունն անցկացվեց ուսումնարանի վերանորոգված և տեխնիկապես վերազինված արհեստանոցում, որտեղ ապահովված էին ուսումնական և քննական արդյունավետ գործընթացին նպաստող բոլոր պայմանները:

Պետական ամփոփիչ ստուգման ընթացքում ուսանողները ներկայացրեցին ուսումնառության երեք տարիների ընթացքում իրենց կողմից կատարված բազմաժանր անհատական գործնական աշխատանքները՝ փայտե գեղարվեստական և զարդակիրառական իրեր, որոնցում արտացոլված էին ուսանողների ստեղծագործական մոտեցումները, կոմպոզիցիոն գրագետ լուծումները, մասնագիտական կարողություններն ու հմտությունները: Ուսանողների աշխատանքները բավականին բարդ էին, համապատասխանում էին նախնական էսքիզներին, կատարված էին մասնագիտական մոդուլների պահանջներին համապատասխան:

Ուսանողները կարողացան հմտորեն ներկայացնել աշխատատեղի կազմակերպման հաջորդականությունը, անհրաժեշտ անվտանգության կանոնները, սանիտարահիգիենիկ նորմերի պահպանությունը, փայտամշակման արտադրության մեջ օգտագործվող փայտանյութի տեսակները, հաստոցները, հարմարանքներն ու գործիքները, որոնց օգնությամբ կատարեցին չափանշումներ, գծանշումներ, երկրաչափական, տրամատային, հարթափորվածքային, միջանցիկ հանովի փորագրային աշխատանքներ:

Քննության ընթացքում որոշ ուսանողներ ցուցաբերեցին մասնագիտական խորը գիտելիքներ և կարողություններ, իսկ Լյովա Պարսամյանը դրսևորեց առանձնահատուկ մասնագիտական կարողություններ և հմտություններ:

Պետական որակավորող հանձնաժողովը որոշեց մասնակից 8 ուսանողներին շնորհել «Փորագրող՝ փայտյա գեղարվեստական իրերի» որակավորում և հանձնել պետական նմուշի ավարտական փաստաթուղթ /դիպլոմ/:

Ուսանողների աշխատանքային գործունեությունը խթանելու, ինչպես նաև մասնագիտական կրթությունը շարունակական դարձնելու համար նպատակահարմար է խորացնել աշխատաշուկայի պահանջներին համապատասխան տեսական և գործնական համակողմանի գիտելիքների, կարողությունների և հմտությունների պաշարը՝ առավել զարգացնելով համագործակցային կապերը այլ հաստատությունների հետ:

Հանձնաժողովի նախագահ՝ Վահագն Ղուկասյան

14.06.2023թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի
«Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում՝ վարսահարդար»
մասնագիտության հիմնական կրթության հիմքով ավարտական կուրսի 2023 թվականի
պետական որակավորող հանձնաժողովի

2023 թվականի հունիսի 13-ին անցկացվեց «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում՝ վարսահարդար» մասնագիտության գծով պետական ամփոփիչ ստուգում:

Պետական ամփոփիչ ստուգումը կազմակերպվեց և անցկացվեց հանձնաժողովի հետևյալ կազմով՝

նախագահ՝	Հարություն Ղազարյան -	«ԱՏԱՆ» ՍՊԸ-ի տնօրեն
տեղակալ՝	Քնարիկ Ահարոնյան -	Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի տնօրեն
քարտուղար՝	Աննա Ղանդիլյան -	Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի դասախոս, մասնագիտական մեթոդմիավորման նախագահ
անդամներ՝	Զարուհի Նահապետյան -	Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ
	Կարինե Գաբրիելյան -	Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի դասախոս
	Լիանա Հովհաննիսյան -	Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի դասախոս

Հաստատությունում պետական ամփոփիչ ստուգումն անցկացվեց ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլներից պետական քննության ձևով: Քննությանը մասնակցեցին թվով 6 ուսանող:

Ուսումնական հաստատությունում «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» մասնագիտությամբ դասավանդող մասնագետներն ունեն դասավանդման փորձ, կարողություններ և հմտություններ, մասնակցել են ՄԿՈՒՀԱԿ-ի կողմից կազմակերպած մոդուլային ուսուցման վերապատրաստման դասընթացների: Մասնագիտական գիտելիքների կատարելագործման, վարսավիրական արվեստի բնագավառի զարգացման և ոլորտի նորարարություններին մշտապես ծանոթ լինելու նպատակով դասավանդող մասնագետները պարբերաբար մասնակցում են առկա և առցանց տարբեր դասընթացների և սեմինար պարապմունքների:

Պետական քննության հարցատոմսերում ներառված էին մասնագիտական մոդուլների հիմնական բովանդակությանը համապատասխանող հարցեր, որոնք բխում են մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված որակավորման բնութագրից:

Պետական ամփոփիչ ստուգման ընթացքում ուսանողները ցուցաբերեցին մասնագիտական լավ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ: Անթերի կատարեցին գործնական աշխատանքներ՝ կանացի կտրվածքներ, պարզ և բարդ հանդիսավոր սանրվածքներ, սանրվածքների մոդելավորում, առօրյա և հանդիսավոր հյուսվածքներ, մազերի ներկում և երանգավորում: Նրանց աշխատանքներում նկատվում էին անհատական ստեղծագործական մոտեցումներ ու ճշգրիտ լուծումներ: Բավականին լավ կարողացան համադրել մարդաչափական տվյալները սանրվածքի տեսակի հետ:

Ուսանողները կարողացան վարժ ներկայացնել մազերի խնամքի միջոցները, քիմիական ուղղման և գանգրացման համար նախատեսված նյութերն ու պարագաները, ներկման գործընթացը՝ ճշգրտորեն պահպանելով սանիտարահիգենիկ նորմերն ու անվտանգության կանոնները: Առանձնահատուկ կարողություններ դրսևորեցին Թեհմինե Թափալցյանն ու Անի Մակարյանը:

Տարբեր գործատուների մոտ արտադրական ուսուցում և պրակտիկա անցնելու արդյունքում ուսանողները ստացել են աշխատանքի առաջարկություններ, իսկ մեկ ուսանող ուսուցմանը զուգընթաց արդեն աշխատում է:

Պետական որակավորող հանձնաժողովը որոշեց մասնակից 6 ուսանողներին շնորհել «Վարսահարդար» որակավորում և հանձնել պետական նմուշի ավարտական փաստաթուղթ /դիպլոմ/:

Ուսումնական հաստատությանը առաջարկվեց կազմակերպել և ապահովել ուսանողների մասնակցությունը տարածաշրջանում բարձր հեղինակություն վայելող ոճաբան-վարսահարդարների առկա կամ հեռավար վարպետաց դասընթացներին՝ ուսումնական գործընթացն առավել արդյունավետ դարձնելու, նորարական լուծումներ գտնելու և մասնագետների պատրաստման հետագա կատարելագործման նպատակով:

Հանձնաժողովի նախագահ՝ Հարություն Ղազարյան

13.06.2023թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի «Խոհարարական գործ՝ խոհարար» մասնագիտության հիմնական կրթության հիմքով ավարտական կուրսի 2023 թվականի պետական որակավորող հանձնաժողովի

2023 թվականի հունիսի 9-ին անցկացվեց «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի «Խոհարարական գործ՝ խոհարար» մասնագիտության գծով պետական ամփոփիչ ստուգում:

Պետական ամփոփիչ ստուգումը կազմակերպվեց և անցկացվեց հանձնաժողովի հետևյալ կազմով՝

Նախագահ՝	Գագիկ Սերոբյան	-	«Կումա» հյուրանոցա-ռեստորանային համալիրի տնօրեն, խոհարարություն մասնագիտական առարկաներ դասավանդող
տեղակալ՝	Քնարիկ Ահարոնյան	-	Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի տնօրեն
քարտուղար՝	Սուսաննա Ավետիսյան	-	Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ավագ վարպետ
անդամներ՝	Զարուհի Նահապետյան	-	Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ
	Անի Պետոյան	-	Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի դասախոս
	Հերմինե Մաղաքյան	-	Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի դասախոս

Պետական ամփոփիչ ստուգումն անցկացվեց որպես համալիր քննություն՝ ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլներից պետական քննության ձևով:

ԿԳՄՍ նախարարի 19.10.2018թ. N1401-Ա/2 հրամանով 2018-2019 ուսումնական տարվանից Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում «Խոհարարական գործ» մասնագիտության գծով ներդրվել է փորձարարական դուալ ուսուցման համակարգ, որի շնորհիվ հաստատությունը համագործակցում է Գյումրի քաղաքի հանրային սննդի տարբեր ձեռնարկությունների և ռեստորանային համալիրների հետ:
Քննությանը մասնակցում էին հիմնական կրթության հիմքով 10 շրջանավարտ և 2021 թվականի որակավորման քննությանը չմասնակցած, միջնակարգ կրթության հիմքով 1 շրջանավարտ:
Քննությունն անցկացվեց ուսումնարանի նորակառույց, ժամանակակից սարքավորումներով հագեցված ուսումնական խոհանոցում:
Ուսումնական հաստատությունում «Խոհարարական գործ՝ խոհարար» մասնագիտությամբ դասավանդում են երկու մասնագետներ, ովքեր ունեն մասնագիտական հարուստ գիտելիքներ և դասավանդման փորձ, պարբերաբար մասնակցել են մոդուլային ուսուցման վերապատրաստման դասընթացների:

Անի Պետոյանը մասնագիտական ձեռնարկի համահեղինակ է, ծանոթ է խոհարարության նորարություններին, տարբեր ազգերի խոհանոցների առանձնահատկություններին, գործատուների և աշխատաշուկայի պահանջներին: Ուսումնական հաստատությունը հանդիսանում է <Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն> հիմնադրամի <Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցության> հիմնարկի մարզային կենտրոն, իսկ Անի Պետոյանը՝ ծրագրի դասավանդող: Նրա սաները մասնակցել են <Համաշխարհային հմտություններ-2021> և «Հայաստանի երիտասարդ-ուսանող խոհարարի մրցույթ 2023» մրցույթներին և զբաղեցրել համապատասխանաբար երկրորդ և երրորդ տեղերը:

Պետական քննության հարցատոմսերում ներառված էին առանձին մասնագիտական մոդուլների հիմնական բովանդակությանը համահունչ հարցեր, որոնք համապատասխանում են մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված որակավորման բնութագրերին:

Քննության ընթացքում որոշ ուսանողներ ցուցաբերեցին մասնագիտական խորը գիտելիքներ, կարողություններ և խոհարարական առանձնահատուկ հմտություններ:

Ուսանողները, կերակրատեսակների պատրաստման ժամանակ կարևորելով ժամանակի և չափաբաժինների պահպանումը, կիսապատրաստուկների պատրաստման հերթականությունը, անվտագության կանոնները, կարգապահությունը և սանիտարահիգենիկ նորմերը, կարողացան հասնել ցանկալի վերջնարդյունքի՝ անթերի կատարելով առաջադրանքները:

Համաձայն սահմանված տեխնոլոգիայի և կերակրատեսակների, ուսանողները կարողանում էին իրականացնել սննդամթերքի խոհարարական /ջերմային և մեխանիկական/ մշակում, կատարել կերակրատեսակների համապատասխան ձևավորում: Նրանց աշխատանքներում առկա էին ստեղծագործական ունակություններ, գեղագիտական ճաշակ՝ համեմված տարբեր ազգերի խոհանոցների ճաշատեսակների համադրմամբ: Կերակրատեսակները պատրաստվեցին համաձայն բաղադրատոմսերի, առանց որակական կորուստների՝ պահպանելով բաղադրիչների ճիշտ չափաբաժինները:

Ուսանողները բավականին վարժ կարողացան կազմել և ներկայացնել անհրաժեշտ սննդային բաղադրիչների պահանջագիր, ինչպես նաև հաշվետվություն ընդունված, օգտագործված և սննդային մնացորդի վերաբերյալ:

Դուալ ուսուցման ձևաչափի առանձնահատկության շնորհիվ ուսանողներից շատերը, հաստատություններում իրականացվող գործնական աշխատանքների ընթացում ցուցաբերած մասնագիտական կարողությունների արդյունքում, համագործակցող տարբեր գործատուներից ստացել են աշխատանքի առաջարկներ, աշխատել ուսումանը զուգընթաց:

Պետական որակավորող հանձնաժողովը որոշեց մասնակից 11 ուսանողներին շնորհել «Խոհարար» որակավորում, նրանցից 10-ին հանձնել պետական նմուշի սովորական ավարտական փաստաթուղթ /դիպլոմ/, իսկ Նարեկ Սամվելի Շահբազյանին՝ գերազանցության դիպլոմ:

Ուսումնական հաստատությանը առաջարկվեց մասնագիտական գիտելիքների խորացման, կարողությունների և հմտությունների կատարելագործման նպատակով ուսանողներին ծանոթացնել խոհարարության նորարարություններին, շուկայի պահանջներին, կազմակերպել վարպետաց դասեր, հանդիպումներ ու խորհրդատվություններ հանրապետության լավագույն խոհարարների հետ:

Հանձնաժողովի նախագահ՝ Գագիկ Սերոբյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի «Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի» մասնագիտության հիմնական կրթության հիմքով ավարտական կուրսի 2023 թվականի պետական որակավորող հանձնաժողովի

2023 թվականի հունիսի 12-ին անցկացվեց «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի «Համակարգիչների շահագործում» մասնագիտության գծով պետական ամփոփիչ ստուգում:

Պետական ամփոփիչ ստուգումը կազմակերպվեց և անցկացվեց հանձնաժողովի հետևյալ կազմով՝

նախագահ՝	Քնար Սարգսյան -	Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի գրաֆիկ դիզայներ
տեղակալ՝	Քնարիկ Ահարոնյան -	Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի տնօրեն
քարտուղար՝	Աննա Մարգարյան -	Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ուսմասվար, դասախոս
անդամներ՝	Զարուհի Նահապետյան -	Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ
	Անուշ Մկրտչյան -	Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ
	Համբարձում Վարդանյան -	Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի դասախոս

Հաստատությունում պետական ամփոփիչ ստուգումը անցկացվեց հետևյալ ձևով՝ պետական քննություն մասնագիտական մոդուլներից: Քննությանը մասնակցեցին 11 ուսանողներ: Հաստատությունում «Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի» մասնագիտությամբ դասավանդող մասնագետներն ունեն մասնագիտական խորը գիտելիքներ, կարողություններ, հմտություններ և դասավանդման փորձ, պարբերաբար մասնակցել են ՄԿՈՒՀԱԿ-ի կողմից կազմակերպված «Կարողությունների ձևավորմանը միտված մոդուլային ուսումնական ծրագրերով ուսումնառության գործընթացի կազմակերպման և իրականացման» թեմաներով վերապատրաստման և առցանց տարբեր դասընթացների: Իրազեկ են մասնագիտական և կրթական նորություններին և բարեփոխումներին, ուսումնական գործընթացում հմտորեն օգտագործում են տեղեկատվության ապահովման տեխնիկական միջոցներ և տեխնոլոգիաների կիրառման ժամանակակից մեթոդներ:

Պետական քննության հարցատոմսերում ներառված էին առանձին մասնագիտական մոդուլների հիմնական բովանդակությանը համապատասխան հարցեր, որոնք բխում են մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված որակավորման բնութագրից:

Պետական ամփոփիչ ստուգման ընթացքում նաև ներկայացվեց ուսանողների անհատական գործնական աշխատանքները՝ թեմատիկ և բովանդակալից սահիկաշարերի ցուցադրմամբ:
Քննության ընթացքում ուսանողների մեծ մասը ցուցաբերեց հիմնարար գիտելիքներ և կարողություններ: Ուսանողները վարժ աշխատում էին օֆիսային փաթեթի ծրագրերով և գրաֆիկական խմբագրիչներով, տիրապետում էին համակարգչի կառուցվածքին և համալրող սարքավորումներին, ինչպես նաև ցանցային պաշարներից օգտվելու և հմտորեն կարգաբերումներ կատարելու կարողությունների: Հմտորեն կատարում էին ձևարարական բազմաբնույթ աշխատանքներ՝ օգտագործելով կետային գրաֆիկայի հնարավորությունները և պատրաստում էին գունային գրագետ լուծումներով գրաֆիկական փաստաթղթեր: Ճիշտ կատարում էին հակավիրուսային ծրագրերի տեղակայում, զննում, թարմացում, էլեկտրոնային փոստի պարզ կարգաբերումներ, ինչպես նաև նամակների ստացման, ուղարկման, արխիվացման և ապաարխիվացման աշխատանքներ: Մեկ ուսանող ուներ ավելի թույլ կարողություններ:

Թվով 11 ուսանողների, պետական որակավորող հանձնաժողովի որոշմամբ, շնորհվեց «Օպերատոր համակարգչի» որակավորում և պետական նմուշի ավարտական փաստաթուղթ /դիպլոմ/, որոնցից Հովհաննես Համազարյանին և Արաքսյա Չորեքչյանին՝ գերազանցության:
Կրթական գործընթացի բարելավման նպատակով ուսումնական հաստատությանն առաջարկվեց ուսումնառության ընթացքում ուսումնասիրել ավելի ժամանակակից Illustration վեկտորային գրաֆիկայի խմբագրիչը, որն ունի ձևարարական բարդ աշխատանքներ կատարելու հնարավորություններ և գործիքակազմ:
Ուսանողներին մոտիվացնելու և աշխատաշուկայի համար մրցունակ մասնագետներ պատրաստելու նպատակով առաջարկվեց օգտվել բազմաթիվ լրացուցիչ մասնագիտական ծրագրերից, մասնակցել առկա և հեռավար դասընթացների:
Շարունակել համագործակցությունը Գյումրու տեխնոլոգիական և Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնների, ինչպես նաև հարակից ոլորտի կազմակերպությունների հետ, հետևել տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման գործընթացներին, պարբերաբար կատարել քննարկումներ և նորարարությունները ներդնել ուսումնական գործընթացում:

Հանձնաժողովի նախագահ՝ Քնար Սարգսյան

12.06.2023թ.